ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

հոկտեմբերի 2022 թվականի №-Ա
ք. Երևան

## «ՍՈԼԱՐՍԻՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ԱՐԳԵՍՏ» ՀՈՂՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԷ №0618 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2018 թվականի հունվարի 31-ի №14Ա որոշմամբ «ՍՈԼԱՐՍԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված «Արգեստ» հողմային էլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0618 լիցենզիայի (այսուհետ՝ ԼԷ №0618 լիցենզիա) պայմանների 14-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավորեցվել էր մինչև 2019 թվականի հուլիսի 31-ը Հանձնաժողով ներկայացնել Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով (այսուհետ՝ Նախագիծ) ինչը, սակայն, չի կատարվել, ի հետևանք որի՝ նշված ժամկետը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, համարվել է երկարաձգված մինչև 2021 թվականի հունվարի 31-ը,

բ) Ընկերությունը մինչև 2021 թվականի հունվարի 31-ը Հանձնաժողով չի ներկայացրել Նախագիծը, ինչը փաստվել է Հանձնաժողովի 2021 թվականի ապրիլի 9-ի №119Ա որոշմամբ և, Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, Նախագիծը ներկայացնելու ժամկետը համարվել է երկրորդ անգամ երկարաձգված մինչև 2022 թվականի հուլիսի 31-ը, մինչդեռ նշված ժամկետում դարձյալ չի ներկայացվել,

գ) Հանձնաժողովը 2022 թվականի օգոստոսի 3-ից հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն ԼԷ №0618 լիցենզիայի գործողությունը կասեցնելու հարցի ուսումնասիրության նպատակով, որի մասին Ընկերությունը ծանուցվել է 2022 թվականի օգոստոսի 3-ի №ԳԲ/34.3-Մ2-12/2618-2022 գրությամբ,

դ) Ընկերությունը վարչական վարույթի շրջանակում քննարկվող հարցի առնչությամբ փաստարկներ և հիմնավորումներ չի ներկայացրել,

ե) Կարգի 47-րդ կետի համաձայն՝ արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից լիցենզիայով ամրագրված ժամկետում Նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու դեպքում նշված ժամկետը համարվում է երկարաձգված նախկին ժամկետի չափով, բայց ոչ ավելի, քան մինչև լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի ավարտը՝ հետևյալ պայմաններով.

1) 1-ին անգամ երկարաձգվելու դեպքում՝ առանց որևէ վարչական և ֆինանսական պատասխանատվության.
2) 2-րդ անգամ երկարաձգվելու դեպքում՝ Կարգի №3 հավելվածի համաձայն երաշխիքով սահմանված գումարի կեսը փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
3) նույն կետի 2-րդ ենթակետի համաձայն 2-րդ անգամ երկարաձգված ժամկետում Նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու դեպքում արտադրության լիցենզիայի գործողությունը կասեցվում է.

զ) վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը ԼԷ №0618 լիցենզիայի պայմանների 14-րդ կետով սահմանված և երկրորդ անգամ երկարաձգված ժամկետում՝ մինչև 2022 թվականի հուլիսի 31-ը, Նախագիծը չի ներկայացրել Հանձնաժողով,

և հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը և Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. ԼԷ №0618 լիցենզիայի պայմանների 14-րդ կետով սահմանված և երկրորդ անգամ երկարաձգված ժամկետում՝ մինչև 2022 թվականի հուլիսի 31-ը, Նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու հիմքով կասեցնել Ընկերության ԼԷ №0618 լիցենզիայի գործողությունը՝ մինչև կասեցման պատճառի վերացումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ այն ստանալու պահից տասնհինգօրյա

ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝** **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
հոկտեմբերի 2022թ.